«Նոր ժամանակի կրթություն»ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Խաղային տեխնոլոգիաների կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում»

Առարկան՝ Երաժշտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ամալյա Մանուկյան

Ուսումնական հաստատություն՝ 64 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1.Խաղի տեսության հիմունքները----------5

Գլուխ 2.Խաղային գործունեությունը դպրոցական կրտսեր, միջին և ավագ դպրոցական հասակում:----------11

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը երաժշտություն առարկայի դասավանդման գործընթացում:----------14

Եզրակացություն----------16

Օգտագործված գրականության ցանկ----------19

Ներածություն

Խաղը համարվում է առաջատար գործունեություն նախադպրոցական հասակի երեխաների համար:Բայց ոչ այն պատճառով,որ երեխաները մեծամասամբ զբաղված են խաղով,այլ այն,որ երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է տեղի ունենում:Այն նախատիպն է համարվում հետագայում բոլոր տեսակի գործողությունների համար,քանի որ երեխաների խաղի միջոցով մոդելավորվում են մեծահասակների կատարած գործողությունները:Հոգեբանության մեջ խաղի վերաբերյալ բազմաթիվ տեսություններ են առաջացել:Կարլ Գրուսը գտնում էր,որ խաղը երիտասարդ օրգանիզմի անգիտակից նախապատրաստումն է կյանքին:Ըստ Զ.Ֆրեյդի երեխան խաղում է իր անլիարժեքությունից դրդված՝այժմ հնարավորություն չունենալով լինելու բժիշկ,տիեզերագնաց:Որոշ հեղինակներ գտնում են,որ խաղը կուտակած ավելորդ էներգիայի վատնում է,երբեմն էլ՝հաճույքի աղբյուր:

Թեմայի արդիականությունը:Խաղի էական,կարևոր նշանակությունն այն է,որ երեխան կանգնում է ուրիշ մարդու դիրքերի վրա,կարծեք թե նայելով աշխարհին նոր՝մեծահասակի տեսանկյունից,որի դերը նա կատարում է:Խաղի ընթացքում երեխաների մտավոր ակտիվությունը միշտ կապված է երևակայության հետ:Խաղերն իրենց բովանդակությամբ կարող են ոչ միայն դրական,այլև բացասական ազդեցություն ունենալ երեխայի վրա:

Կան այնպիսի խաղեր,որոնք նպաստում են ատելության,կոպտության,դաժանության առաջացմանը և նյարդային համակարգի վրա բացասական ազդեցություն են թողնում:Այսպիսով,խաղը երեխաների բազմակողմանի դաստիարակության միջոց է:Այստեղ ձևավորվում են երեխաների անձնավորության բոլոր կողմերը,տեղի են ունենում զգալի փոփոխություններ նրանց հոգեկանում,որով նախապատրաստվում է անցումը դեպի նոր,զարգացման ավելի բարձր աստիճան:

Սրանով է բացատրվում խաղի հսկայական ,դաստիարակչական հնարաորությունները:Խաղի մեջ դրսևորվում է երեխայի անձնավորությունը,նրա անհատական առանձնահատկությունները:Խաղը հնարավորություններ է տալիս դաստիարակությունը իրականացնել կազմակերպված և պլանավորված ձևով,ոչ թե քարոզների,ներշնչանքի՝ «Եղիր ազնիվ» ,«Խաղալիքներ տուր ընկերոջդ» և այլն,այլ բուն խաղային գործունեության կազմակերպման միջոցով:

Բոլոր խաղերը լայնորեն օգտագործում են որպես ֆիզիկական դաստիարակության միջոց:Խաղերը պահանջում են ակտիվ շարժումներ,որոնց շնորհիվ ուժեղանուն է արյան շրջանառությունը,ավելի լիարժեք և խորն է դառնում նյութափոխանակությունը:Խաղերը նպաստուն են ճիշտ կեցվածքի ձևավոմանը և գեղեցկությանը:Խաղը երեխաների համար իրական կյանք է:

Ես ուսումնասիրում եմ այս թեման,քանի որ ցանկանում եմ պարզել,թե ինչպես են կիրառվում **խաղային տեխնոլոգիաները երաժշտություն առարկայի դասավանդման գործընթացում:**

Թեմայի նպատակնը իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել մի քանի խնդիրներ՝

. Խաղի մասին տեսությունների մանկավարժական վերլուծությունը,

.Խաղերի դասակարգումը,

.Խաղային գործունեության առանձնահատկությունները տարիքային տարբեր փուլերում,

.Դերային խաղը որպես հոգեբանական գործոն:Դերախաղի կարևորությունը միջանձնային հարաբերություններում,

.Խաղային տեխնոլոգիաների կիրառումը երաժշտություն առարկայի դասավանդման գործընթացում:

Գլուխ 1.Խաղի տեսության հիմունքները

1.1Խաղի մասին տեսությունների մանկավարժական վերլուծությունը

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է,այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:Խաղի հիմնադիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին,այլև փիլիսոփաներին,հասարակագետներին,ազգագրագետներին,կենսաբաններին և հոգեթերապևտներին:

Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից գիտնականները միահամուռ նշում են,որ խաղը մարդկային մշակութային համակարգի ուրույն և անբաժանելի մասն է:

Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ՝Յ.Ա.Կոմենսկին,Ժ.Ժ.Յուսոն,Ֆ.Ֆրյոբելը,Կ.Դ.ՈՒշինսկին,ինչպես նաև խոշորագույն հայ մանկավարժներ և գրողներ՝ Խ.Աբովյանը,Ղ.Աղայանը,Հ.Թումանյանը և այլոք:Խ.Աբովյանը հորդորում էր մանկավարժներին «չզրկել երեխային անմեղ խաղերից»:Իր «Պարապ վախտի խաղալիք» աշխատության մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկական խաղերի դերը:Աբովյանի փոքրիկ հերոսներ Եղիսաբեթի,Ստեփանի,Վարդանի հետաքրքրությունը,տրամաբանությունը,մտածելու ընդունակությունը,ձևավորվել են մեծերի պատմությունների,զրույցների,ինչպես նաև կյանքի հետ շփվելու,խաղի ներգործության շնորհիվ:Կոչ անելով գնահատել և հարգել երեխայի անձնավորությունը Աբովյանը խորհուրդ է տալիս խաղի միջոցով դաստիարակել ճշմարտություն,ազնվություն,համեստություն,աշխատասիրություն:

Հ.Թումանյանը գտնում էր,որ խաղը երեխայի «բնական,օրգանական պահանջն է,նրա լրջությունը,նրա էությունն է...կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում,խաղով է քնում,խաղով ճանաչում և ընդունում...Եվ ամեն բան,ինչ որ նրան տրվում է խաղով,ուրախությունով ընդունում է,հեշտ է յուրացվում»:

Մանրամասն քննարկենք խաղային գործունեության հիմնական առանձնահատկությունները:

1.Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ակտիվության և ինքնուրույնության,հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու,արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու:

2.Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները:Երեխան չի գործում «երևակայական իրադրության» պայմաններում և չի օգտագործում փոխարինող առարկաներ:

3.Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության,առանձնացմանը:Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ,պլանավորում,արդյունք,որոնք ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում,տեղափոխվում են գործունեության այլ ձևեր:

4.Խաղային գործունեությունը բնական գործունեություն է,ուր չկա ճնշում և հարկադրանք,առկա է երեխաների համար բնական միջավայր:Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնուրույն,ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ:Խաղն ապահովում է հուզականությամբ հագեցած հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ:

5.Խաղը ստեղծագործական գործունեություն է,քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահանկությունների բացահայտմանը և կրեակտիվ ընդունակությունների զարգացմանը:Խաղի ընթացքում դրսևորվում և ախտորոշվում են երեխայի ժառանգական նախադրյալները,հակումներն ու հետաքրքրությունները:

6.Խաղը աշխարհաճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է,իմացական գործունեություն:Խաղային գործունեության ընթացքում ձեռք բերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և տեղեկատվական են և գործնական բնույթի:Գիտելիքի խաղում անմիջապես կիրառվելու կամ փորձարկելու հնարավորությունը,նպաստում է դրա յուրացմանը և ամրապնդմանը,խաղի ընթացքում ձեռքբերած գիտելիքները չափազանց կայուն են:

7.Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզակամային ոլորտի զարգացմանը,հետևաբար և հիմնարար անձնային որակների ձևավորմանը:

Ամփոփելով խաղային գործունեության առանձնահատկությունները,միևնույն ժամանակ նրա առավելությունները մանկական գործունեության այլ ձևերի նկատմամբ,կարելի է համարձակորեն արձանագրել,որ խաղը,հանդես գալով երեխաների առաջատար գործունեություն,երեխաների զարգացման լավագույն միջոցն է,նրանց կյանքի և գործունեության կազմակերպման հիմնական ձևը:

1.2.Խաղերի դասակարգումը

Գիտամանկավարժական[8] գրականությանը հայտնի են խաղերի դասակարգման տարբեր եղանակներ և մոտեցումներ:Ֆ.Ֆրյոբերը կարևորում է խաղի մանկավարժական նշանակությունը,և խաղերը տարբերակում է իրենց մանկավարժական ուղղվածությամբ:Այսպես,նա առանձնացնում է մտավոր խաղեր,սենսոր խաղեր,շարժախաղեր և այլն:Կ.Գրոսը խաղը բաժանում է երկու խմբի՝խաղվարժություններ երեխայի կամային ուժերը զարգացնող և հիմնական բնազդները կատարելագործող խաղեր:

Խաղերի դասակարգման հետաքրքիր տարբերակ է առաջարկել ռուս մանկավարժ Ս.Լ.Նովոսյոլովան,որի հիմքում ընկած է խաղային գործունեության նախաձեռնությունը:Հեղինակն առանձնացնում է խաղային երեք խումբ.

-խաղեր,որոնց նախաձեռնողները երեխաներն են,դրանք ինքնուրույն և ստեղծագործական բնույթի խաղեր են:Օրինակ,սյուժետադերային խաղերը,խաղ-թատերացումները,խաղ-փորձարկումները:

-խաղեր,որոնց նախաձեռնողը մեծահասակներն են,դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն:Օրինակ,ուսուցանող և ինտելեկտուալ խաղերը,շարժախաղերը,խաղ-զվարճանքները;

-ժողովրդական խաղեր,որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ:

Խաղային գործունեությունն իր բնույթով լինում է ստեղծագործական և նպատակաուղղված զարգացնող կամ կանոնով:Առաջին խմբին դասվում են.

-սյուժետա-դերային խաղեր,

-խաղ-թատերացումները,

-կառուցողական խաղերը,

-ռեժիսորական խաղերը և խաղ-երևակայությունները:

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից,այն ստեղծագործական բնույթի է:Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումները արտաքին աշխրհի հանդեպ,ինքնուրույնության և ակտիվության մղումները,դրսևորվում են «ազատության աստիճանները»,ցանկությունները,նախասիրություններն ու հետաքրքրությունները:Խաղի սյուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը:Երեխաների խաղային մտահղացումն իրականացվում է դերային փոխակերպման եղանակով:Ստեղծագործական խաղերը նպաստում են սոցիալական դերերի յուրացմանը,սոցիալական փորձի ձեռքբերմանը և սոցիալական հարաբերությունների հաստատմանը:Ինքնուրույն եղանակով յուրացված սոցիալական փորձը վստահություն է ներշնչում աշխարհի և սեփական «ես»-ի հանդեպ և օգնում երեխային ինքնքհաստատվելու հասակակիցների միջավայրում:

Խաղերի երկրորդ խումբն են կազմում կանոնով խաղերը,որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու,դաստիարակելու և զարգացնելու նպատակով:Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը,շարժողական խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղեր:Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերիհիման վրա երեխաներին:Խաղի բովանդակությունը միտումնավոր սահմանափակվում է կանոններով,որոնք կարգավորում և նպատակաուղղում են երեխաների խաղային գործողությունները:Կանոնով խաղերի բացառիկ նշանակությունը առանձնահատուկ կարևորել է Դ.Բ.Էլկոնինի կողմից,որը նշում է դրանց կրկնակի մանկավարժական ներգործությունը,մյուս կողմից մանկավարժի նպատակաուղղված ներգործությունը,մյուս կողմից՝ երեխաների փոխներգործությունը,այսինքն,ինքնաուսուցումը(ավտոդիդակտիզմը):Կանոնավոր

խաղերը ուսուցանում են և,դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն:Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում և պատրաստի ձևով ներկայացվում է դաստիարակում,կրթում են և զարգացնում,նպաստում են ինքնագնահատմանը և փոխգնահատմանը:

Ռեժիսորական խաղն անհատական գործունեություն է և ունի ընդմենը մեկ դերակատար:Այն միանձնյա խաղ է,քանի որ մյուս «մասնակիցները»անշունչ առարկաներ են՝ խաղալիքներ,տարմեր փոխարինող իրեր:Խաղացող երեխան միաժամանակ գործում է իր և մնացած բոլոր «խաղընկերների»կողմից,դրանով իսկ կառավարում է խաղային իրադրությունը և կարգավորում խաղի ընթացքը:

Ռեժիսորական խաղերը երեխայի անհատական զարգացման ընթացքում ծագում են ավելի շուտ,քան սյուժետադերային խաղերը:Ռեժիսորական խաղերի հիմնական առանձնահատկությունը,կարելի է ասել,նույնիսկ առավելությունը կայանում է նրանում,որ խաղն ունի ընդամենը մեկ դերակատար,որի «խաղընկերները»չունեն ցանկություններ,պահանջմունքներ,հետևաբար չունեն նաև հավակնություններ խաղից,ինչը հնարավորություն է տալիս խաղացող երեխային միանձնյա ղեկավարելու,որոշելու բոլորի փոխարեն և գործելու սեփական նախասիրություններից ելնելով:Ռեժիսորական խաղն ունի արտաքին հայացքից անտեսանելի,սակայն բավական լուրջ խորհուրդ՝ այն նրբանկատորեն սովորեցնում է երեխային խաղալ և գնահատել սեփական ուժերը:Անշունչ «խաղընկերների»՝խաղալիքների և առարկաների հետ շփվելու միջոցով,նա,կարծես,նախապատրաստվում է հասակակիցների հետ հաղորդակցման:Անհատական խաղը հնարավորություն է տալիս երեխային ազատ արտահայտելու սեփական փորձը,դիտարկելու այն տարբեր կողմերից և տեսանկյուններից:Ռեժիսորական խաղերի ընթացքում նույն սյուժեն երեխայի կողմից կարող է խաղարկվել մի քանի եղանակներով՝ տարբեր խաղանյութի օգտագործմամբ:Ռեժիսորական խաղերի միջոցով բավարարվում են երեխայի եսակենտրոն հակումները:Սակայն,խաղի անսահման հնարավորություններից օգտվելու բուռն ցանկությունը ստիպում է երեխային խաղի մեջ ներգրավել բազմաթիվ անհայտ կերպարներ,ինչը բարդացնում է սցենարի խաղարկման ընթացքը և ակամայից հարստացնում երեխայի փորձը:Սեփական փորձի հարստացման գործում անգնահատելի է խոսքի դերը,խոսքը կարծես թե նվագակցում է խաղային գործունեությանը,օգնում առավել լիարժեք բացահայտելու կերպարը,դրսևորելու վերաբերմունքը նրա նկատմամբ:Խոսքի միջոցով երեխան կարող է լուծել ցանկացած անլուծելի խնդիր,կարող է դուրս գալ ստեղծված ամենաբարդ իրադրություններից:Խոսքը ռեժիսորական խաղում դառնում է խաղի հաջողության գրավականը:Խոսքի արտահայտչական միջոցներով՝ առոգանությամբ,շեշտադրումներով,խորիմաստ բառերով,հումորի և այլ դրսևորումներով,երեխան հանգիստ փոխում է սեփական դիրքորոշումները և վերանայում խաղի ընթացքը:

Նախադպրոցական մանկության շրջանում անփոխարինելի է սյուժետադերային խաղերի դերը8:Սյուժետադերային խաղերն իրենց բնույթով ստեղծագործական են:Երեխան այդ խաղում արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ,այլև տարբեր իրադրություններ,անձնային փորձից փոքրիկ դրվագներ կամ հասարակական երևույթներ:Սյուժետադերային խաղերն իրենց բնույթով հուզական են,հագեցած են դրական հույզերով և լիցքերով:Սյուժետադերային խաղերին բնորոշ հուզականությունը,ներքին բավարարվածության զգացողությունը,խաղի

ընթացքում պահպանվող բարձր տրամադրվածությունն ու ուրախությունը նպաստում է առավել ազատ և անկաշկանդ ինքնադրսևորմանն ու ինքնահաստատմանը:Սյուժետադերային խաղերի սյուժեները հաջորդաբար արտացոլում են արդի հասարակության բոլոր կողմերը,և նույնիսկ ավանդական սյուժեները երեխաների տարբեր սերունդներ արտացոլում են հասարակության առկա առանձնահատկությունները և մեկնաբանվում են, կարծես, ժամանակի թելադրանքով:Սյուժետադերային խաղերի ղեկավարումը պահանջում է աշխատանք երկու ուղղությամբ.

-խաղային գործունեության կայացման,

-խաղային գործունեության մանկավարժական ուղղորդման՝ երեխաների դաստիարակության և նրանց փոխհարաբերությունների ձևավորման նպատակով:

Ղեկավարման եղանակները պայմանական բաժանվում են երկու խմբի՝ ավանդական և ժամանակակից մեթոդների:Ավանդական ղեկավարման ուղին հիմնված է խաղերի բովանդակության հարստացման վրա:Վերջին տարիներին՝ նույնիսկ ղեկավարման նոր մոտեցումների կիրառման պայմաններում,արձանագրվում է սյուժետա-դերային խաղերի բավական ցածր մակարդակ և դրանց նկատմամբ երեխաների հետաքրքրության զգալի նվազում:Նշված փաստերը կրկին վերանայման է ենթարկում սյուժետադերային խաղերի կազմակերպման և ղեկավարման գործող եղանակները և նպաստում նոր մեթոդների մշակմանը:

Խաղի կառուցման եղանակների ուսուցումն՝ ուղղված խաղային կարողությունների ձևավորմանը, ենթադրում է նպատակային մանկավարժական աշխատանք երեք փուլով: Առաջին փուլում երեխաները մեծահասակների հետ համատեղ խաղում սովորում են հաջորդաբար կատարել առարկայա-խաղային գործողություններ, օգտագործելով համապատասխան խաղալիքներ և առարկաներ:Երկրորդ փուլում երեխաները սովորում են կատարել խաղային դերին համապատասխանող գործողություններ, ինչը նպաստում է դերային վարքագծի առանձնահատկությունների յուրացմանը:

Երրորդ փուլում, երեխաները մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում սովորում են կառուցել ամբողջական սյուժե,միավորելով սյուժեի առանձին մասերն ու դրվագները:

Համաձայն Ա.Պ.Ռոսովայի հետազոտությունների տվյալների,երեխաների փոխհարաբերությունները խաղի ընթացքում անցնում են ձևավորման երկարատև ուղի:Փոխհարաբերությունների առաջին աստիճանն իրենից ներկայացնում է անկանոն կամ ձևավորված խաղային հարաբերությունների փուլ և բնութագրում է երեխաների վարքի անկանոն և անկազմակերպ դրսևորումներով:Երեխաները ոչ միայն չեն փորձում համագործակցել,այլ միտված են խանգարելու միմյանց,խոչնդոտելու խաղը(խլում են խաղալիքները,հրմշտում իրար,դրսևորում են անկայուն հուզականություն):Փոփոխությունների առաջին աստիճանը բնորոշ է 2-3 տարեկան երեխաներին,որոնք նշված ձևով ուղակի զբաղվում են և ուշադրություն գրավում, նրանք չունեն հաղորդակցման որևէ փորձ:

Փոխհարաբերությունների զարգացման հաջորդ աստիճանը բնութագրում է միայնակ խաղերով: Մեկուսի խաղերի ընթացքում երեխաները չեն հաղորդակցվում,յուրաքանչյուրը տարված է իր խաղով,սակայն նրանք չեն էլ խանգարում

միմյանց,հարկ եղած դեպքում կարող են, նույնիսկ, օգնել իրար։ինքնուրույն ընթացող միայնակ խաղը՝ համատեղ խաղերի առաջնային նախադրյալն է9։

Փոխհարաբերությունների զարգացման երրերդ փուլում ի հայտ են գալիս «կողք-կողքի»խաղերը,դրանք տարբերվում են նրանով, որ նույն խաղային տարածքում ծավալվում են ինքնուրույն խաղեր,որոնք ընթանալով առանձին՝ միտված են միավորվելու։Երեխաները ոչ միայն օգնում են միմյանց,այլև հարկ եղած դեպքում պատրաստ են խորհուրդ տալու,հուշելու,զիջելու որևէ խաղանյութ, կարող են, նույնիսկ,հնչել միավորման զգույշ առաջարկներ։

Չորրորդ փուլը՝կարճատև հաղորդակցման փուլն է, որը բնութագրվում է խաղի շուրջ հաղորդակցվելու և փոխհարաբերվելու ցանկությամբ և անհրաժեշտությամբ։Այս փուլում արդեն ձևավորվում են որոշակի խաղային պարտականությունների գիտակցմանը։Երեխան հասկանում է,որ խաղից դուրս գալ չի կարող,քանի որ իր պատճառով կարող է դադարել խաղը։Խաղային մտահղացումը կարող է ենթարկվել փոփոխության,կարող են վերաբաշխվել դերերը, սակայն անփոփոխ է մնում արդեն միավորված խաղացող երեխաների խումբը։

Փոփոխությունների ձևավորման հինգերորդ փուլը կարելի է անվանել երկարատև հաղորդակցման փուլ,որը բնութագրվում է ընդհանուր հետաքրքրության հիման վրա,խաղի բովանդակության շուրջ երեխաների միավորմամբ։Երեխաների հաղորդակցումը գիտակցված է, այն ուղղված է խաղի նպատակին ընդհանուր ուժերով հասնելուն՝ մտածված խաղային գործողությունների և համագործակցության միջոցով։Երեխաները բավական ինքնուրույն են և կազմակերպված,ընդունակ գնահատելու սեփական գործողությունները և խորհրդակցելու համատեղ խաղի շահերից ելնելով։

Վեցերորդ աստիճանը՝ կայացած փոխհարաբերությունների փուլն է,այն բնութագրվում է հասակակիցների հետ մշտապես շփվելու, ընդհանուր խաղային մտահղացման շուրջ միավորվելու և համատեղ խաղի սյուժե կառուցելու ցանկությամբ ու պատրաստակամությամբ։

Երեխաները հանուն խաղի,հանուն փոխպայմանավորված գործունեության պատրաստ են փոխզիջման,փոխօգնության և այլ դրական արարքների։Վեցերորդ աստիճանի փոխհարաբերությունները համարվում են ձևավորված, դրանք աստիճանաբար կատարելագործվում և իմաստավորվում են երեխաների կողմից ու ակամայից փոխանցվում իրական կյանք։Սյուժետադերային խաղերի ընթացքում, երեխաների փոխհարաբերությունների ձևավորման գործում մեծ է մեծահասակի

գրագետ մանկավարժական աշխատանքի դերը:Մանկավարժության գիտահետազոտական ուսումնասիրությունների շարքում մշտապես արդիական է ստեղծագործական խաղերի ղեկավարման նոր մշտական հիմնախնդիրները:

Գլուխ 2.Խաղային գործունեությունը դպրոցական կրտսեր, միջին եվ ավագ դպրոցական հասակում

Դպրոցական կրտսեր տարիքի համար բնավորության վառ և դաստիարակության հետևանքով հեշտ է մտնել կերպարի մեջ:Երեխաները հեշտ են մտնում ցանկացած գործունեության մեջ՝ հատկապես խաղային,հաճախակի մտնում են խմբային խաղի մեջ,շարունակում են խաղալ ծրագրերի,խաղալիքների հետ,առաջանում են ոչ պլանավորված խաղեր:

Խաղը սովորելու մեջ, խնդրի ստեղծման ժամանակ կատարվում է ներմուծված իրավիճակի միջոցով,խնդրի իրավիճակում այն առաջանում է խաղացողի խաղը ընկալման շրջանակներում,գործունեությունը կայանում է խաղի կերպարների ձևավորման շրջանում,մի մասն էլ տեղի է ունենում պայմանական խաղի ժամանակ:

Երեխաները գործում են խաղի կանոններով (ինչպես դերային խաղի ժամանակ, տրամաբանությամբ խաղացող դերը, երևակայական կերպարի արտաքին ձևավորման իրական պատկերացման մեջ):Խաղային գործունեությունը կարգավորում է նաև ուսուվչի դերը,որը մարմնավորում է մասնակցի օգնականի և խորհրդատուի դերը:

Խաղերը երկու ձևով են դեր խաղում սովորեցնող և սովորեցնող ճանաչողական:Խաղի ցուցադրական ֆունկցիան կայանում է խաղի քննարկման ժամանակ,խաղի անալիզը,ինչպես մոդելավորող, նրա հարաբերությունը իրականության հետ:Հետագայում գլխավոր դերը կատարողը կատարում է վերջնական եզրակացությունը, որտեղ մասնակիցները քննարկում և վերլուծում են խաղի արդյունքները, խաղայինից մոդելի և իրականության համադրությամբ,ինչպես նաև քայլը խաղային-սովորեցնող փոխգործողությունը:Սկսնակ դպրոցի դաստիարակության մեջ ներարված են խաղեր, ունակ հարստացնելու ու երեխաների մոտ առաջացնելու արագ բառապաշար, կապակցված խոսք:Խաղերը ուղղորդված են նաև թվային զարգացմզնը, հաշվել սովորելու, տրամաբանության զարգացման,հիշողության և ընդունակությունների ամրապնդման:

Ցուցուցադրական խաղի էությունը կայանում է.

1. նրանց հաճախակի օգտագործման,

2. նպատակային խաղի ծրագրից սովորական ցուցադրական վարժություններով:

Խաղային տեխնոլոգիաները կառուցվում են նպատակային դասընթացի՝ մեծամասնությունը ներառող, ընդհանուր միավորումը սցենարի գաղափարի հետ:Նրա մեջ ներառվում է խաղի անմիջական հետևանքները և վարժությունները,խաղացողի ընդունակությունները ցուցադրող, բնավորության դրսևորումները,համեմատությունը,խաղային խմբերը ընդհանուր ճանաչողության,խաղային խմբերը,որտեղ դպրոցականները կարողանում են տարբերել իրականը անիրականից, խաղային խմբեր-ինքդ քեզ տիրապետելու, հասկանալու, արագ կողմնորոշվելու խոսքի մեջ և այլն:

Այս ամենում խաղային սցենարը զարգանում է սովորելու յուրահատուկ առանձնահատկությունը, օգնում է ակտիվացնել սովորելու գործընթացը, համալրել առարկաների թիվը:Խաղային գործունեությունը կազմված է խաղային էլեմենտներից և մասնիկներից:

Երեխաներին երաժշտության տեսության ուսուցումը Կիրյուշինայի մեթոդով:Այս մեթոդը հասու է բոլոր նրանց ովքեր ընկալում են երաժշտությունը հոգեպես:Բոլոր հերոսները տարբեր ձևով են իրենց դրսևորում արկածների ժամանակ,որտեղ բացահայտում է նրանց ունակություններն ու որակը:Հերոսի հետ միասին երեխաները սովորում են երաժշտության ընկալումն ու ունակությունը,ռիթմի,տոնի և չափի զգացողությունը:

Դեռահաս տարիքում ցանկություն է առաջանում ստեղծել քո սեփական աշխարհը, ցանկությունը մեծանալու,երևակայության բուռն զարգացումը, երազանքներ և բանաստեղծական խաղերի առաջացումը:Ավագ դպրոցում հիմնական խաղերի նպատակն է հաստատվել հասարակության առաջ, հումորային երանգը, հաղթելու ցանկությունը, խոսակցական գործունեության զարգացումը:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում շատ կարևոր է:Խաղի մեթոդաբանական հիմքերի, սոցիալական բնույթի

և սովորողի զարգացման գործում դրա ունեցած դերի ու այլ հարցերի մշակմամբ ժամանակակից մանկավարժության մեջ զբաղվել են Լ. .Վիգուրսկին, Ա.Ն.Լեոնտևը, Դ.Բ.Էլկոնինը:Ըստ հոգեբանների՝ խաղին հատուկ կարևորություն է տրվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման ու դաստիարակության գործում:Այդ տարիքը առանձնանում է որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան,և զարգացման հենց այդ շրջափուլի գործունեության հիմնական տեսակը,ուսուցման հետ զուգահեռ,շարունակում է մնալ խաղը: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում նպաստում է աշակերտի ակտիվացմանը՝ և՛ մարմնաշարժողական և՛ իմացական առումներով:Ակտիվությունն անհրաժեշտ պայման է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:Խաղի մուտքը դասարանում ստեղծում է նոր,յուրահատուկ միջավայր:Աշակերտներն անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը՝ աննկատելիորեն ընդգրկելով ակտիվ ուսուցման մեջ:

Դիդակտիկ խաղերը կարող են օգտագործվել առաջին դասարանի աշակերտների համար:

Հաշվի առնելով խաղի դրական արժեքը կրտսեր աշակերտի համակողմանի զարգացման համար՝ նրա առօրյան մշտապես պետք է բավականաչափ ժամանակ տրամադրել երեխային այդքան ուրախություն պարգևող խաղային գործունեությանը:Կարգավորելով դպրոցականների խաղերը,զերծ պահելով նրանց չարաճճիությունից,ավելորդ ֆիզիկական ծանրաբեռնվածությունից,էգոցենտրիզմից (մշտապես գլխավոր դերերը խաղալու ցանկությունից),ուսուցիչները,միևնույն ժամանակ, չպետք է անհարկի ճնշեն երեխաների նախաձեռնողականությունն ու ստեղծագործական ունակությունները:

Մանկավարժորեն գրագետ կազմակերպված խաղը մոբիլիզացնում է երեխայի մտավոր կարողությունները, զարգացնում կազմակերպչական հմտություններ, սերմանում է ինքնակարգապահության հմտություններ, ուրախություն է բերում համատեղ գործողություններից:

Որպես երաժշտության ուսուցչուհի ներկայացնեմ **խաղային տեխնոլոգիաների կիրառումը երաժշտություն առարկայի դասավանդման գործընթացում:**

«Երաժշտություն» առարկան հիմնական դպրոցում ունի իր առանձնահատկությունները և հիմնախնդիրները:Երաժշտության ուսուցման գործընթացն ունի իր յուրահատկությունները՝ կապված մարդկային մտածողության, ընկալման, իմացության, երևակայության և հուզաշխարհի առանձնահատկությունների հետ:Խաղն ու երաժշտությունը երեխայի առավել հետաքրքիր ու սիրելի զբաղմունքներից են:Իմ կարծիքով, եթե երեխան շատ ժամանակ է տրամադրում խաղին, ուրեմն մեծանում է ճիշտ ճանապարհով:Խաղալիս նրանք դառնում են ազատ ու անկաշկանդ, խաղի արդյունքում զարգանում են հիշողությունը, ուշադրությունը,

երևակայությունը, ինչպես նաև խոսքն ու ստեղծագործական միտքը:Աշակերտը մշակույթը չի սովորում, այն յուրացնում է դիտելով-լսելով-մասնակցելով:Այս շղթայի մասերը կապողը խաղն է,որը հասու է բոլորին,սիրելի է բոլորին ու հասկանալի:Խաղն ինքնուրույն հորինելով՝ աշակերտները երգը յուրացնում են՝ պատկերով մեղեդիով, հարմոնիայով, բովանդակությամբ,որովհետև խաղալիս նրանք հենվում են իրենց զգացողությունների և պատկերացումների վրա, աշխատում են զգալ, հասկանալ և վերարտադրել ամեն ինչ:Միաժամանակ օգտագործում են իրենց ունեցած տեղեկությունները, ինֆորմացիան:Հաճախ խաղը ոչ թե փոքր ներկայացում է ստացվում,այլ շարժուն խաղ է դառնում,որն ավելի յուրօրինակ է,ազատ շարժումներով:Այդպիսին է «Գացեք տեսեք»,«Կոտ ու կես կորեկ ունեմ» երգ-խաղերը:

Ձայն,խոսք,աստմունք, երաժշտություն-երգ, շարժում-պար՝ երաժշտական խաղի այս բաղադրիչները աշակերտների բնական զարգացման անփոխարինելի միջոցներ են:Դրա շնորհիվ երգի ուսուցում կոչվածը հետաքրքիր, գրավիչ, սիրելի ընթացք է ունենում:

Եզրակացություն

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է մանկության շրջանում,մարդու ողջ կյանքում:

Խաղը գործունեության տեսակ է,որի դրդապատճառները ոչ թե նյութական արդյունք և օգուտ ստանալն է,այլ հաճելի ապրումները,ընդունակությունների մարզումը,սոցիալական կապերի ստեղծումը:

Խաղը բացի ժամանցային երևույթ լինելուց,ունի նաև դաստիարակչական,ուսուցողական նշանակություն: Այս դեպքում այն հանդես է գալիս որպես միջոց,մեթոդ,մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար:Խաղը լայն տարածում ունի ժողովրդական դաստիարակության և դպրոցական շրջանում:Երեխայի զարգացման գործում հսկայական է խաղի առաջատար գործունեության դերը:Խաղի ծագման,էության, երեխաների կյանքում նրա տեղի և նշանակության,առավել արդյունավետ օգտագործման և այլ շատ ուրիշ հարցեր՝ կապված խաղի հիմնահարցի հետ, հետաքրքրել ու շարունակում են հետաքրքրել փիլիսոփաներին, պատմաբաններին,հոգեբաններին, մանկավարժներին:

Երեխաների խաղն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով:Նրանցից հիմնականը այն է,որ խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի՝ մեծերի գործողությունների,գործունեության,նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է,ընդ որում,այնպիսի պայմաններում,որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ:Խաղը թույլ է տալիս տեսնելու ու ճանաչելու երեխաների հոգին,այն նպաստում է մանուկների դաստիարակությանն ու զարգացմանը:Խաղի մեջ երեխան փորձում է իր ուժերը,դառնում ինքնուրույն:Խաղում երեխան յուրահատուկ ձևով վերարտադրում է այն,ինչը տեսնում է շրջապատում:Խաղը դիտվում է որպես երևակայության դրսևորման միջոց:Խաղում երեխան կուտակում է գիտելիքներ շրջապատող

աշխարհի վերաբերյալ,դառնում է համարձակ,ճկուն,աշխատասեր:Բազմաթիվ մանկավարժներ խաղը դիտում են որպես երեխաների ինքնուրույն,ստեղծագործական գործունեություն:

Խաղի կարևոր յուրահատկություններից է այն,որ խաղային գործունեությունը,կերպարը և խոսքը հանդես են գալիս միասնական,կապակցված ձևով:Սա խաղի ոչ թե արտաքին հատկությունն է, այլ նրա բուն էությունը:

Խաղը գործունեություն է, ուր հաղթահարվում են երեխայի անմիջական աֆեկտները,ցանկությունները,և նա սովորում է գործել ոչ թե վայրկյանական ցանկությունների ազդեցության տակ,այլ ապագա գործունեության իրադրությունում:Խաղը նոր պահանջմունքների դպրոց է:Խաղի ընթացքում երեխաների մտավոր ակտիվությունը միշտ կապված է երևակայության հետ:Խաղն ունի բացառիկ մշանակություն երեխաների բարոյական հատկությունների ձևավորման հարցում:Խաղում ձևավորվում են ընկերասիրությունը,բարեկամական զգացմունքները,ընդհանուր նպատակին հասնելու համար համաձայնեցված գործողությունները,վիճելի հարցերը արդար լուծելու կարողությունները:

ՈԷսումնասիրությունը հնարավորություն է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների:Խաղի նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով,դրանում էլ կայանում է իր հզորությունը, որն էլ մարդու համար ոչ միայն ժամանց ու հանգիստ է, այն կարող է դառնալ սովորություն ստեղծագործական առումով,որպես մարդկային հարաբերությունների մեխանիզմ և աշխատանքի առաջացում:Առաջին հերթին պետք է առանձնացնել խաղի գործողության ձևերը՝ շարժողական, ինտելեկտուալ, աշխատանքային,սոցիալական և հոգեբանական:Եվ վերջապես խաղային գործունեության մեջ զգալի չափով մտնում է խաղային շերտը:Խաղը ոչ միայն երեխային զարգացնում է համակողմանի,այլ նաև զարգացնում է երեխայի հոգեկան գործընթացները:

. Խաղը ստեղծագործական գործունեություն է,քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը:Խաղի ընթացքում դրսևորվում են երեխայի հակումներն ու հետաքրքրությունները,խաղային գործունեության միջոցով իրականացվում են հետևյալ հիմնական խնդիրները՝

. զարգանում են հոգեկան գործընթացները,խաղի ընթացքում ստեղծվում են ինքնաարտահայտվելու հնարավորուոյուններ,

. խաղը՝ որպես իմացական գործունեություն նպաստում է աշխարհաճանաչմանը,

. Խաղի ընթացքում զարգանում են բարոյակամային որակների և հուզազգացմունքային ոլորտը:

Երաժշտությունը երեխաների ուսուցման և զարգացման ամենահարուստ աղբյուրներից մեկն է, նրանց խաղերի բնական տարրը, որն ապահովում է մեծահասակների հետ դրական և ուսանելի փոխգործությունների բազում առիթներ:

Անցկացրած հետազոտական աշխատանքների հիման վրա կատարած հետևությունները նպաստել են հանգելու հետևյալ եզրակացությունների՝

1 . Խաղերը,որոնք ուղղված են ռիթմի զգացողության զարգանալուն,դրանք երեխաներին սովորեցնում են ռիթմիկ արտահայտվածություն զգալ երաժշտության մեջ՝ այն փոխանցելով շարժման մեջ:

2 . Խաղերը,որոնք ուղղված են լսողության զարգացմանը,օգնում են երեխաներին սովորել տարբերակել երաժշտության երանգները և դրա ամբողջական ընկալումը:

3 . Խաղերը,որոնք ուղղված են հիշողության և լսողության զարգացմանը,դրանցում երեխաները սովորում են անընդհատ լսել երաժշտություն,հիշել այն,որպեսզի ճշգրիտ և բնութագրական շարժումներով իրենց արտացոլումը կատարեն երաժշտական տպավորություններով:

4 . Խաղերը,որոնք ուղղված են ընդհանուր առմամբ երեխաների ստեղծագործական զարգացմանը,դրանք ազդում են երեխայի դաստիարակության և զարգացման հոգեբանական բաղադրիչի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արզումանյան Ս. «Հոգեբանություն»-Երյան.Զանգակ-97,2003:
3. Գյուլամիրյան Ջ.-«Խաղալով սովորենք» Երյան,2009
4. Հարությունյան Հ.Ս.-«ՈՒսումնական խաղերի ձեռնարկ»Երյան,2007
5. Մարության Ս.Ա.,Մ.Դալլաքյան, նախադպրոցական մանկավարժություն Բուհական դասագիրք,Երյան-2008
6. Նալչաջյան Ա.Ա.Հոգեբանության հիմունքներ,Ե.1997

Համացանցային գրականություն

1. http;//www.lauc.ru//zzz/ebooks/vinichenko4/Page271.htm
2. http;//www.openclass.ru/dig-resource/57245
3. http;//revolution.allbest.ru/pedagogics/00032657.html
4. ipk.admin.tstu.ru/articles/?cat=105$pub=1512